41. ԼԱՎ ԿԻՆ ԸՆՏՐԵԼ

Խարուստ մարդմ կըլնի, կէրթա, թաքավորի աղջիկ կուզի, թաքավոր կասի. - Աղորթ դյու խարուստ մարդ ես, ես թաքավոր եմ, ամա դյու չը զիս զախմ ես. էմ աղջիկ կուզես, ես նաղդ կուզեմ, խարիր ոսկի նաղդ տաս, խարիր էլ արպըշըմե խալաթ:

Տվեց ու ասաց. - Էմ խարս հազրի, ես գյամ, տանեմ:

Ասաց. - Կուզե՞ս, վաղն էլ արի, տար:

Էկավ, գնաց, ուր խարս բիրեց:

Էն քյաղքի թուճար ժխո էն էր. էն կը տաներ, էն կը բիրեր:

Էլավ ուր լաճ պսակեց, իրեք-չորս օր արավ խարսանիս:

Խարսանիս պլավավ, էն գշեր իշ փեսեն տեհա մո խարս, խեր ասաց. - Առա՛ էմ մատնիք, տար թալ քյու նշանածի ծուց, իշ խապար կը տա քե, գյաս, ըզի ասես:

Տարավ, նշանած քնուկ էր, թալեց ծուց:

Որ թալեց ծուց, խարս ղանչեց. - Այ թուճարի լաճ, ի՛շ ճամբախ իշ դյու կէհաս, իշալա փուշ կանանչի քյու ճամբախ, իշ առուտուր անես, Աստվածութեն քյու ձեռնով չբիրի, հա քյու առ ու տուրին մեջ կոտռիս, չայիրին-չիմանին մեջ իշ քելես, իշ կակուղի, քյու ոտաց տակ փուշ կանանչի:

Լաճն զըվրավ, էկավ, ասաց խոր. - Այ խերի՛ն, ծընա ասաց:

- Այ տղա՛, - ասաց, - վազի՛, քյո մոր ասա՛, գյա:

Վազեց, մեր բիրեց. մեր էկավ գա:

Ասաց. - Գնա՛, էդա թաքավուրի աղջիկ տար, թասլիմ թաքավուր արա:

Մատնիք մընեն առեց, տարավ, թասլիմ թաքավուր արաց:

Ինոր դրկըցքիր ասին. - Մենք քյո լաճ պսակինք. պտի էհանք Ստամբոլ, մե մալ սաղացուցեք, գյանք:

Ասաց. - Իս էմ լաճ դել չեմ պսակե. նոր տը պսակիմ:

Էլավ, գնաց վոզիրի աղջիկ ուզեց. վաքսուն ոսկի նաղդ ուզեց. վաքսուն ոսկի տվեց. վաքսուն ոսկու էլ խալաթ տվեց:

- Էմ խարսի թատարուք տըսիք՝ ես տը գյամ, էմ խարս տանեմ:

Վոզիր ասաց. - Իրեք օր ձը մոհլաթ տուր, վըր չորսին արի՛ տար:

Իրեք օր մնաց. չորսին բիրեց ուր խարս:

Իռջին գշեր իշ լաճ տ'էրթեր մո խարս, խեր ասաց. - Ա՛ռ էմ մատնիք, տա՛ր թալ նշանածի ծուց, իշ խապար կասի, գյաս, ձի ասես:

Մատնիք տարավ, թալեց նշանածը ծուց:

Նշանած քնիր, ակխավ. էն էլ մեկելացի ասաց. - Այ թուճըրի լաճ, իշ ճամբախ կէրթաս, օղուրսուզ ըլնես, քյու մրազին չխասնիս... :

Տղեն գնաց, խոր ասաց. - Չըմքի էդոնք սիրական ունեն:

Ասաց. - Այ տղա՛, գնա՛, քյու մեր կանչը:

Էմել գնաց, կանչեց:

Ասաց կնկյան. - Գնա մատնիք մընեն առ, աղջիկ տար, թասլիմ վոզիր արա:

Իլավ, տարավ թասլիմ վոզիր արաց:

Էդա թուճար առավտուն գնաց. ռեսի աղջիկ ուզեց:

Ըռես քառասուն ոսկի փարա ուզեց, քառասուն ոսկու էլ խալաթ ուզեց:

Տվեց, ասաց. - Էմ խարսի թատարուք տըսեք, տը տանեմ:

Ասաց. - Տաս օր ձը մոլաթ տուր, նոր առ, տար:

Տաս օր վրեն ընցավ, նոր գնաց, խարս բիրեց:

Բիրեց, էկավ, արավ խաղ, խարսնիս:

Էն հառջին գշեր խեր ասաց. - Տղա՛, առ մատնիք, տար թալ քյու նշանածի ծուց. ի՛շ խապար կը տա, գյաս, ձը ասես:

Մատնիք առեց, տարավ թալեց ծուց:

Իշկաց, ինչխ բիրած, դրած թախտի մեջ, սկուն մնացիր կայնուկ:

Էկավ խոր ասաց. - Խերիկ, մնացիր ի կայնուկ:

- Գնա՛, - ասաց, - դիրմ էլ իշկա:

Էմել գնաց, կայնուկ ի:

էկավ խոր ասաց. - Իշկացի, կայնուկ:

- Տղա՛, գնա ձեռ տու ինե, պալքի քնե հավեն իվե կայնըմանց:

Լաճ գնաց. իշկաց, կյո քընե կայնըմանց, մատնիք թալից կյո ծուց: Խարս ակխավ, ասաց. - Այ թուճըրի լաճ, իշ բանի ձեռ թալես, Աստված քյո ձեռնով բիրի, իշ բան էնես, Աստված մեկն խազար դարձուցի, իշ ճանապար կէհաս, քյու առջևքիր փուշ ըլնի, կանանչ դառնա, քյո խոր, մոր անեծքի տակ չմտնիս:

Լաճ դըվրավ, էկավ ասաց. - Խերի՛կ, ձը ծնա ասաց:

Ասաց. - էսա կյո էմ խարսն ի, գնա, քընի:

Խարս, փեսեն գնացին, քընան:

Առավտուն էդ դրկիցքիր ասին. - Մենք տ'էրթանք թուճրուութեն, դյու մի խիտ չըլնըս, չենք էհա Ատամբոլ:

- Խա՛, - ասաց, - գյամ:

էլավ ուր թատարուք տեհավ, էրթեր, տղեն ասաց. - Խերի՛կ, դյու նիստ, ես տէհամ:

- Որդի՛, - ասաց, - դյու ջհել իս, գնա մո քյու խարս:

- Չու մկա դոլագի, ես էդա կնկյան տեր, ես տէհամ:

Ասաց. - Ես քե տանեմ, ապսպրեմ էմ մարդիր:

Գնաց, ասաց. - Ամանաթ ձե էմ լաճ:

Ինոնք ասին. - Պտի տանենք, ինչխ դյու մե կը տաներ, բիրեր:

էլավ վեր, էդա մեկ ավուր խարս թողեց, գնաց Ատամբոլ:

Մե ջխուտ էլ, կյո ինոր տուն մեջ էն քաղքին ի, իլավ վեր, ուր շորեր թալեց ուր իտև, գնաց տնիր ման էկավ, ասաց. - Ես էհամ, էմ շորիր ծախեմ:

Գնաց, մտավ էն թուճըրի տուն:

էն թուճըրի խարս էկավ մո ջխուտ պազար, էդա ջխտու աչք ընկյավ խարսի աչք, ուշք ընցավ:

էդա զատ-մատեր վերցին, թալին, ասին. - Ջխուտ խատավ, մենք պազար չընք անի:

Պաղ ջյուր թալին ջխտու երսին, ջխուտ խատած տեղեն, ակխավ, ուր ճոթ-մոթեր առեց, գնաց ուր տուն:

Ակուն մեռուկ մարդու ցեղ գնաց, էկավ:

Գնաց մե պառվու մոտ, մե ոսկի տվեց. - Պառա՛վ, - ասաց, - ֆելան խարս բիրես էմ ձեռաց:

- Ի՞շ տաս ձը, որ բիրեմ խը քեզ ձեռաց:

Ասաց. - Մե ջուխտ սոլ կյո մո ծի ի. ինու կարված պիթուն ոսկի ի, ինոր բիրնքիր արծաթ, ոսկի բանցուցած ի:

Գնաց, բիրեց, տվեց պառվուն, պառավ առեց, գնաց մո խարս:

Գնաց խարսի իրես պագեց, ասաց. - Ես էկեր եմ քե տես:

Ասաց. - Պառա՛վ, դյու էմ աչիչ գյաս, էմ գլխյուն գյաս:

Էլավ, սոլեր շանց տվեց, ասաց. - Բիրեր եմ քե հատիյա:

Խարս ասաց. - Էսա սոլեր մարդ մարդու հատիյա չը տաներ. բան կա մըջ էնա սոլերաց. արի, սաղն ասա:

Ասաց. - Չէ՛, ժխո քյու հատիյան ի:

- Բարով իս իկե, - ասաց, - դե, գնա:

Ջխուտ հա կէհա պառվու տուն կը գյա, իշկա թի պառավ կը գյա:

Պառավ էկավ:

- Պառավ, - ասաց, - դյու բիրիր վըր ճամբխին, ի՞շ ասաց:

Ասաց. - Ճորով եմ ճամբխեն բացե. զատ մ'էլ տաս:

Ասաց. - Մեկ շապիկ էլ ծի կա, հմեն արպըշում ի, ոսկի, արծաթ կյո մեջ բանցըցուկ:

Էլավ, փաթըթեց, տվեց, պառավ տարավ:

Տարավ գնաց խարսի մոտ, բարև տվեց:

Ասաց. - Պառա՛վ, դյու ինչի՞ ես իկե:

Ասաց. - Էսա շապիկն էլ քե խըմակ իմ բիրե:

Ասաց. - Պառա՛վ, էսա բանիր մարդ հատիյա չտանի, տը գյաս, ընծիկ սաղ ասես:

Ասաց. - Ի՞շ քենե պախեմ, իշ Աստըծուց, մեկ ջխուտ քե տըսե, սիրտ ընկե թըխ քե:

Ասաց. - Որ էն ջխտու սիրտ ընկե թըխ ծի, էմն էլ ընկե թըխ ջխուտ, ինու հոդի տըկեն թըխ լաղըմի, թը գյա չում էմ հոդեն, մեկ համամ մի շինի մեջ էն լաղմին:

Պառավ գնաց, ասաց. զխուտ լաղմ զարկեց, համամ շինեց մըջ էդ լաղմին էկավ, նստավ խըտ խարսի կշտին:

Խարս ասաց. - Դյու էմ ասածներ արի՞ր:

Ասաց. - Խա՛:

- Ե՛լ, իշկանք, - ասաց խարս:

Ջխուտ առեց խարս գնաց, լաղըմի մեջ իշկաց:

Խարս ասաց. - Դյու էրկու շամատան բիրես, դնիս մեկը նա կող, մեկը նահան: էրկու ոսկի խնձոր բիրիս, դնես մեկ շամատանի նա կող, մեկ նահան:

Խարս իշ ասաց նահան, նա բիրեց:

էկավ, գնաց մո խարս, ասաց. - Դե, ըլի վե, քեյֆ անելու գյախ ի:

Ասաց. - Չէ, գյախ չի:

Ասաց. - Ընչի՞:

Ասաց. - Դյու քյու մուրուս, աչք-իրես գնդիս, գյաս մո ձի:

Ջխուտ էլավ վեր, կէներ ուր մուրուս գնդեր, գնաց չու հոդից դյուս խարս դանչեց. - Արի, նի՛ստ, ես կը գնդեմ, մե էրեմուս թո մո մեր մնա. ժամանակմ էմ խեր դալաք էր, ես մընեն ուսեր եմ:

Գնաց, ուր մուրուս լվաց. խարս նստավ, դանակ սրեց. էկավ ջխուտ, նստավ ինե, դանակ թալեց, դանակ չկտռեց, ասաց. - Գնա, աղեկ լվա, աղեկ պռտե:

էն էլ նստավ, դանակ սրեց, տվեց գլուխ, մազեր դեմեն կը փախներ. դանակ տվեց, մազեր բիրեց տակ, դանակ թալեց, ջխտու վիզ կտռեց:

Որ ջխտու վիզ կտռեց, իշ որ գլխու, մուրսի դրվածք հըմեն քերդեց, կաշին վիրուց, գլուխ, ջանդակ դրեց մեկ ղութի:

Ջխտու գլխու կաշին քեշեց ուր իրես. առավտուն գնաց, ջխտու տուքան բացեց նստավ, առտուր արեց:

Դորիս հալխ հըմեն էկան պարավան առուտուրը, ինոնք որ արշինը կտեն էրկու ղուռուշ, էն կտեր քսան փարա: Դորիս ինչ տուքնդար կար՝ գնացին արզըհալ տվին թաքեավորին. - էն ջխուտ ծընա կը ծախի, ծընա պազար կանի, չգյան մեր վրեն ալիշվերիշ:

Թաքեավոր էն ջխուտ կանչեց. - Դյու ընչի՞ խնա պազար կանես:

Ջխուտ ասաց. - էմ մալն ի, ես սկուն կը ծախեմ:

- Օղորթ կասի, ուր մալն է, կը թալի ջյուր:

Մեկ շաբաթ կէներ, սկուն առտուր կաներ. լաղըմի մեջեն կէներ ուր հոդեն:

Օրմ ջուապ տվին. - Թուճըրի լաճ էկավ:

Հըմեն, իշ մընեն հազ կանեն, գնացին հառաջ, առին էկան, ասին. - Դյու իշ թուճար ես, մեկ ջխուտ տուքան կը բանցուցի, առտուր հըմեն ընկե վըր ինոր:

Ասաց. - Ես էլ տը գյամ, տըսնամ:

էկավ, գնաց, տըսավ, բարև տվեց, բարև առեց:

Ինի, խարս իրկան կը ճանչնա, իրիկ չճանչնա:

Տեղ շանց տվեց, ասաց. - Նիստ:

Չուր հէվարին նստավ, ասաց. - Մ'էրթար, խը քե գործ կա:

Իլավ, տուքնի դյուռ շինեց, մոմ կպուց. էդա մաղազեն ի վեր տարավ ուր հոդեն:

Թուճարի լաճ ասաց. «Էսա ջխուտ տանե էմ գլուխ փոթորանք խանի, տանի, էմ վիզ կտռի՞»:

Տարավ գնաց համամի մեջ, ինոր ոսկի խնձորքիր տըսավ, ասաց. - Մեկ խնձոր առ քե:

Տարավ հոդեն:

Մարդն կիշկա, կասի. «Էսա իշ պախս ի, ջխուտ մըջ էմ հոդին»:

Կնստին, պենքմ կը մնա, ջխտուն կասի. - Հյո՞ւր ի քեռ կնիկ:

- Ես կհամ, էմ կնկյան ասեմ, գյա:

Գնաց ուր ջխտու կաշին դրեց գա, ուր շորիր խագյավ, էկավ:

Իրիկ կիշկա, կասի. - Էսա էմ կնիկ ի, նա իշ պախս ի:

- Գնա, քյու իրիկ կանչի, գյա, կասի:

Էմել գնաց, ջխտու կաշին քեշեց իրես, էկավ, կայնավ ուր հառջև:

Էդա թուճրի լաճ ասաց. - Որ դյու էկար, քյո կնիկ ի՞շ էլավ:

Ասաց. - Կյո գա ի:

Ասաց. - Գնա՛, առ բի, էրկուս խիտրաց էկեք:

Էմել գնաց, ջխտու կաշին թալեց դա, էկավ:

Իրիկ խատնից. - Ջխուտ կը գյա պենք մը, պենք մը դյու կը գյաս, էսա էմ հոդեն ի, դյու էմ կնիկ ես, էսա ի՞շ պախս է:

Կասի. - Ես քյո կնիկ էմ, ծի չե՞ս ճանչնաս:

Կասի. - Ես քի կը ճանչնամ, ջխուտ չեմ ճանչնար:

Էդտեղ իշ իլե, չիլե, իրկան կասի:

Կասի. - Դյու ծի չըս խավատար, իլի, նահան սապաթի բիրան բաց:

Բացեց տըսավ կյո ջխտու գլուխ, ջանտակ:

Ասաց. - Ծնա արավ ծի, ես էլ ծնա արի:

Կնիկ ասաց. - Գինաս, ի՞նչխ անինք, որ մենք էն ջխտու ջանդակ պա-խինք, մարդ չը հիմնա: Ես կէհամ, էն տուքան առտուր կանեմ, դյու գնա, մեկ թուղթ գրի քյու մոտեն, բի ծի, ասա՛. «Քյու խեր խիվանդ ի, ասեր ի՝ էմ տղեն թը գնա, խասնի ծի»:

Իլավ թուղթ բիրեց, տվեց նահան, կարդաց, էսաց. - Էլի, հանք թաքավորի մոտ:

Գնացին մո թաքավոր, էդա ջխուտ ասաց. - Թաքավո՛ր ապրած, էմ խեր կյո խիվանդ ի, ես կէհամ, թի որ իս էկա ետ, ժխո էմ տուքանն ի, թի իս չէկա, էմ մալ ապրանք թասլիմ էսա մարդ:

Թաքավոր էլավ, էդա թուղթ մոհրեց, տվեց թուճըրի լաճուն:

էկան, նստան առտուր:
Ձխուտ տարին, խորին:
Թուճրի լաճ խոր պախս արավ, ասաց. - էմ կնիկ ծնա ի արե:
Թուճար էկավ, խարսի ճակատ պագեց:
Ասաց. - Քյու ասըլ զատե ըլնի:
Ես վոզիրի աղջիկ դաստուր տվի, գնաց:
Ասաց. - Ես թաքավորի աղջիկ դաստուր տվի, գնաց:
Ես գիտցա իշ կեր մո ինոնք:
Քյու իրես սիվտակ ըլնի:
Էնտեղ կերան, խման, ուրախացան:
Աստված էլ քե ուրախացնի: